

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՎԻՃԵԼԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Ա. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1975 թ. № 4-ում տպագրվել է պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանի և բանասիրական գիտությունների թեկնածու է. Պիվազյանի պրախոսական մեր «Հայ գիրը և գրչությունը» գրքի մասին, ուր նրանք գնահատելով հայ հնագրության ուսումնասիրության բնագավառում մեր վաստակը, մատնացույց են արել նաև աշխատության մեջ տեղ գտած որոշ թերություններ: Գրախոսության մեջ նրանք միաժամանակ առաջ են քաշել աղբյուրագիտական մի քանի հարցեր, որոնց հետ դժվարաբանում ենք համաձայնվել: Նկատի ունենալով, որ «Պատմա-բանասիրական հանդեսը» հայագիտական մեր այն պարբերականներից մեկն է, որ խնդիր ունի քննարկել և լուծել պատմագիտական վիճելի հարցեր, ուստի կարծում ենք, որ աննպատակահարմար չի դիտվի, եթե մենք անդրադառնանք դրանցից մի քանիսին:

1. Վիճելի գլխավոր հարցերից մեկը կապված է նախաքրիստոնեական հայ գրավոր մշակույթի հետ: Մենք պաշտպանում ենք այն հայագետներին կարծիքը, որոնք ընդունում են հայ գրավոր մշակույթի առկալությունը նախաքրիստոնեական շրջանում: Գրախոսվող գրքում այդ հարցին հատուկ գույժ ենք հատկացրել և բաղմամբով փաստեր մատնացույց արել հօգուտ հայ մատենագրության գոյության: Տարիներ առաջ այդ խնդրով մենք բանավեճ ենք ունեցել է. Պիվազյանի հետ: Նա մեր դեմ հանդես է եկել առանձին հղումով¹, իսկ մենք պատասխանել ենք²: Եթե մեր ընդդիմախոսները ցունկոնում էին օգտագործել գրախոսելու առիթը և կրկին անդրադառնալ այդ վեճին, ապա պարտավոր էին ըստ էության քննարկել գրքում առաջ քաշված կոմունները, այլապես դեկլարատիվ հայտարարության միջոցով, թե Աբրահամյանի մատնացույց արած փաստարկները «հայագիտության մեջ մեկից ավելի անգամ քննադատված և մերժված են» (էջ 207)³ գիտական հարցեր չեն լուծում:

2. Վիճելի մյուս հարցը՝ IV դարի հայ գրչության շուրջն է: Գրքում մենք այն տեսակետն ենք պաշտպանել, որ IV դարում, այսինքն՝ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո մինչև Մաշտոցի կողմից հայկական գիր ստեղծելու ժամանակաշրջանը, հայերն ունեցել են մատենագրություն և հնարավոր համարել, որ այն գրված լինի ասորական կամ հունական տառանիշներով: Մեր ընդդիմախոսները առարկել են մեզ, հետևյալ պատճառաբանությամբ. «Բայց մի բան պարզ է և հայագիտության մեջ ապացուցված՝ հունարեն և ասորերեն այբուբենները հայերենի հնչյունական հա-

1 է. Պիվազյան, Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և Դանիելյան գրերը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 153—170):

2 Ա. Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և դանիելյան գրերը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 131—144):

մակարգը արտահայտելուց շատ հեռու էին: և նրանցով հայերեն գրել հնարավոր չէր» (էջ 207):

Վեճ լինել չի կարող, որ հունական կամ ասորական տառանիշներով հնարավոր չէր կատարյալ ճշտությամբ արտահայտել հայոց լեզվի հնչյունական ներությունները, բայց որ կարելի է նրանցով հայերեն գրել, այդ երևում է մեր գրքում բերված երեք օրինակներից, որոնցից երկուսը վերցրել ենք վիճաբիր արձանագրություններից, իսկ մեկը՝ ձեռագրից: Կարծում եմ, որ չարաշահած չեմ լինի բանավիճելու առիթը, եթե մատնացույց անեմ մի բանի փաստեր, որոնք խոսում են հօսուտ հայ մատենագրության առկայության IV դարում:

IV դարում Հայաստանում հեթանոսությանը փոխարինելու եկած նոր կրոնի քարոզիչները պետք է նոր վարդապետությունը ըստ պատշաճին ներկայացնեին հավասարյալներին, հաղորդեին նրանց Քրիստոսի ավանդած դաղափարները և այդ նպատակով պետք է, որ ստեղծեին կրոնական-կանոնական գրականություն: Գրախոսվող գրքում մենք մատնացույց ենք արել Թեոդորոս Քոթենավորի ուշագրավ տեղեկությունը, որ շորրորդ դարում հայերեն է թարգմանված եղել Ավետարանը, ինչպես և դոյություն է ունեցել նրա մեկնությունը³:

IV դարում քրիստոնեություն ընդունած ժողովրդի համար, անշուշտ, կատարվել են ժամերգություններ և ծիսակատարություններ՝ պատարագ, մկրտություն, պսակագրություն, հուղարկավորություն և այլն, իսկ դրանք անկարելի էին առանց ծիսակատարության անհրաժեշտ ձեռնարկների: Իրավացի է Մ. Օրմանյանը՝ հայ եկեղեցական մատենագրության լավագիտակ հայագետը, երբ քննության առնելով այդ վիճելի հարցը, եկել է հետևյալ եզրակացության. «Պզտիկ գիտություն մը բավական է նկատելու, որ ժամգիրքին մեջ հառաջ բերված սաղմոսներուն շատ մը բացատրությունները Աստուածաշունչի ամբողջության մեջ պարունակված սաղմոսներին տարբեր են: Այս տարբերությունը մեր տեսությամբ կապացուցանեն առաջին ու զործնական թարգմանություն մը շորրորդ դարուն մեջ»⁴:

Նկատենք, որ իր մի հոգվածով՝ «Օտարալեզու հայ գրականությունը շորրորդ դարում», հանդես եկավ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը և մատնացույց արեց IV դարում գրված 18 հայ հեղինակների աշխատություններ, որոնք, նրա կարծիքով, գրված են եղել այլ լեզուներով⁵: Այսպիսով, նա փաստորեն հիմնավորեց օտարադիր և օտարալեզու հայ մատենագրության առկայությունը IV դարում:

Մենք հնարավոր ենք համարում, որ մատնացույց արված մատենագիրների աշխատությունները գրված լինեն օտար լեզանագրերով, բայց մայրենի լեզվով: Հարցի ուսումնասիրությունը, մեր կարծիքով, դեռ դառնում է նախնական վիճակում. այդ ուղղությամբ դեռ կատարվելիք մեծ աշխատանքներ կան: Պետք է նկատի ունենալ, որ ստեղծված այդ գրականության նպատակն է եղել ամրացնել քրիստոնեությունը հավատացյալ ժողովրդի մեջ, ուստի նրանք պետք է որ խոսեին ու գրեին մայրենի լեզվով: Իրավացի է այս հար-

3 «Մատենագրութիւնք Յովհաննու Իմաստասիրի», Վենետիկ, 1833, էջ 154:

4 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. I, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 102:

5 Լ. Ս. Խաչիկյան, Օտարալեզու հայ գրականությունը շորրորդ դարում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 27—51):

ցում ևս Օրմանյանը, երբ գրում է. «Իրավ ալ պաշտամունքի և աղոթքի համար հնար չէր ժողովուրդը օտար լեզվի բռնադատել, զոր բնավ չէր ճանչնար, և հնար չէր չիմացած լեզվով իր կրոնական պայմանները գոհացնել»⁶:

Ի դեպ, մենք չենք ուզում բաժանել այն հայագետների կարծիքը, թե Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը կեղծում են՝ իրենց IV դարի մատենագիր ներկայացնելով: Մենք գտնում ենք, որ նրանք, իրապես IV դարի հեղինակներ են, նրանց աշխատությունները գրված են այդ նույն դարում, գրված են մայրենի լեզվով, այլ բան է, որ նրանց ստեղծագործությունները հետագա դարերում ենթարկվել են զգալի փոփոխությունների:

Տարիներ առաջ «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» ժողովածուի մեջ մենք հրատարակել ենք Անդրեաս Բյուզանդացու տոմարի հին հայկական թարգմանության մի հատվածը, ուր գարնանային արևադարձի օրը զուգահեռված է հայկական շարժական և եղիպտական ու Անտիոքի անշարժ տոմարներով, որը հնարավորություն է տալիս մեզ պարզելու Անդրեասի տվյալ պատահիկի թարգմանության մոտավոր ժամանակը: Այդ բնագրում տաված է. «Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ ըստ թուրք եղիպտացւոցն ի ԻԴ (24) և Դ (4) ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ գայ կշռի ըստ թուրք Անդիոքացւոց ի ԻԵ. երրորդումն դիւստրոս ամսոյն, այսինքն՝ մեհեկանի»⁷:

Եղիպտական պեմենովթ շրրորդ ամսի 25-ը համապատասխանում է հռոմեական մարտ ամսի 20-ին, իսկ հայոց մեհեկան ամիսը այն ժամանակ մարտը 20-ի հետ կարող էր զուգահեռվել հունվարի 25-ից մինչև մարտի 20-ը ընկած ժամանակում: Փորձենք պարզել այդ զուգահեռամասն վերջին սահմանը հարակա՞ն գտնելու միջոցով. մարտի 20-ը 79 օր է, իսկ մեհեկանի վերջին օրը՝ 210, 210-ից հանելով 79-ը, հարակա՞ն կլինի 131, իսկ 131-ը հարակա է եղել 380—383 թթ., հետևապես Անդրեասի տոմարական այդ բնագիրը հայերեն թարգմանված պիտի լիներ 380—383 թթ. ոչ ուշ: Հաճույքով կընդունենք մեր ընդդիմախոսների դիտողությունները, եթե նրանք հակառակն ապացուցեն:

Եվ այսպես, IV դարի հայ մատենագրության հարցում ևս մենք չենք բաժանում ընդդիմախոսներից տեսակետը:

3. Գրախոսող հեղինակները բավականաչափ խոսել են Մաշտոցի ստեղծած այբուբենի ատաղձի մասին և խորձել ժխտել նրա առնչությունը որևէ դրա՞նստի հետ: Նրանք քննադատել են մեզ, որ իբր թե մենք ամեն կերպ ջանում ենք «մաշտոցյան այբուբենը ածանցել որևէ այլ այբուբենից կամ այբուբեններից» (էջ 207):

Խոսելով այբուբենների ստեղծման օրինաչափությունների մասին, մենք գրել ենք. «Դրի պատմությունից հայտնի է, որ այբուբենները մտացածին ձևով, անգոյական չեն ստեղծվում, նրանք փոքր կամ մեծ փոփոխություններով կապվում են իրար հետ, մեկը՝ սկիզբ է առնում մյուսից: Այսպես, հայտնի է, որ փյունիկյան գրից սկիզբ է առել հունականը, հունականից՝ լատինականը,

⁶ Մ. Օրմանյան, Ագապատում, հատ. I, էջ 102:

⁷ Ա. Գ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները (տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», հատ. IV, Երևան, 1967, էջ 72):

լատինականից՝ եվրոպական ժողովուրդներին և այլն» (էջ 48): Ինչպե՞ս է վարվել Մաշտոցը:

Այդ հարցով զբաղվել են երկու տասնյակից ավելի գիտնականներ և մատնացույց արել քիչ թե շատ թվով հայկական տառանիշներ, որոնց զուգադասակները կան այլ ալբուբեններում: Այդ կարծիքն ունեն Հ. Տաշյանը, Ն. Սկինյանը, Ս. Մալխասյանը, Հ. Աճառյանը, լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանը և շատ ուրիշներ: Ուշագրավ է հատկապես ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ է. Աղաջանի «Մեսրոպյան ալբուբենը և ուղղագրությունը»⁸ խորագրով հոդվածը, ուր քննարկված է հայկական ալբուբենի ատաղձի հարցը և մատնացույց արված այն տառանիշները, որոնք նմանություն ունեն հունական կամ այլ տառանիշներին:

Գործում մաշտոցյան բոլորածե երկաթագիրը մենք համեմատել ենք իր ժամանակի հարևան երկրներում գործածված տառանիշների հետ և նշել նրանց մի մասի գծագրական նմանությունը: Մեր ընդգիմախոսները ցանկություն ունեն, ընդհանրապես, մերժելու հայկական տառանիշների նմանությունը այլ ժողովուրդների նշանագրերին: Երանք գտնում են, որ «ինքնատիպ ալբուբեններ կարող են լինել և կան, որոնցից է մաշտոցյան ալբուբենը» (էջ 207): Ապացուցելու համար մեր կիրառած համեմատական մեթոդի անընդունելի լինելը, նրանք հայկական ալբուբենից վերցրել են վեց տառանիշներ և այնպիսի տառանիշներ, որոնք քիչ նմանություն ունեն, և համեմատել հունական և արամեական տառանիշների հետ: Ըստ որում, համեմատության համար օգտագործել են յո՛ւթ թե V դարի մաշտոցյան բոլորածե երկաթագիրը, այլ՝ ժամանակակից տպագրական տառանիշները: Խոշ չվշտանան մեր ընդգիմախոսները, եթե ասենք, որ նրանց կիրառած «համեմատության» այս մեթոդը իր պարզունակությամբ նախընթացը չունի հայ մատենագրության մեջ:

Կարծում ենք, որ մեր ընդգիմախոսները սխալվում են, երբ Մաշտոցի մեծությունն ուղում են տեսնել անպայման տառանիշների գծագրական ձևեր ստեղծելու մեջ: Գրախոսվող գրքում մենք այլ ձևով ենք արժեքավորել Մաշտոցի ստեղծած գրի բացառիկ նշանակությունը՝ շեշտելով նրա արտակարգ ճշտությունը հայոց լեզվի հնչյունական նրբություններն արտահայտելու գործում և այլն: Առանձնապես նշել ենք նորաստեղծ գրի հասարակական-քաղաքական նշանակությունը. «Բացառիկ մեծ է Մաշտոցի և իր աշակերտների ջանքերով ստեղծված գրի նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ: Նոր հորինված ինքնուրույն գրերով և մայրենի լեզվով ստեղծվեց հայկական մի մատենագրություն, որն իր պատվավոր տեղը պրավեց համամարդկային մշակույթի պատմության մեջ: Սակայն ավելի խոշոր է գրերի ստեղծման քաղաքական նշանակությունը: Նա անշալի մեծ դեր կատարեց հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում և պաշտպանող վահան հանդիսացավ՝ օտարերկրացիների կործանարար քաղաքականության հանդեպ» (էջ 55):

Եվ այսպես, մենք մնում ենք մեր նախկին տեսակետին և գտնում, որ Մաշտոցը կտրված չի եղել իր ժամանակի հարևան ժողովուրդների գրական աշխարհից և իր կազմած ալբուբենի մեջ օգտագործել է այլ ալբուբենների որոշ պրածկեր:

⁸ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 26—38:

4. Մաշտոցն օգտագործել է արդյոք դանիելյան կոշվող գիրը, թե ոչ: Այս հարցի վրա ևս ուզում ենք կանգ առնել, քանի որ մեր ընդդիմախոսները մեզ մեղադրել են այն բանում, որ իբր թե մենք համաձայնվել ենք այն կարծիքների հետ, որ «Մեսրոպ Մաշտոցը ոչ թե լրացրել է ասորի Դանիելի՝ իբր թե հայերի համար ստեղծած այբուբենը, այլ մեր բոլոր տառերի, ամբողջ այբուբենի հեղինակն է» (էջ 205):

Յույց տալու համար, թե ինչ ենք մենք ասել, հարմար ենք համարում զրբից բերել այդ հատվածը՝ եզրակացությունը թողնելով ընթերցողներին. «Հարց է առաջանում,— դրել ենք մենք,— Մաշտոցն օգտագործել է արդյոք դանիելյան գրերը, թե ոչ: Պատմիչները, դժբախտաբար, մեզ հստակ տեղեկություններ չեն հաղորդում, ուստի ուսումնասիրողները հարկադրված են լինում խնդրի լուծմանը մոտենալ տրամաբանության հիման վրա: Այս հարցում տարբեր հայագետների հայտնած կարծիքները հանգամանորեն շարադրված են Աճառյանի նշված («Հայոց պրերը») աշխատության մեջ, ուստի չենք ուզում կրկնել: Մենք պաշտպանում ենք այն կարծիքը, որ Մաշտոցն օգտագործել է դանիելյան գիրը» (էջ 49):

5. Տարաձայնություններ ունենք քննադատներիս հետ հայկական շարժական տեմարի սկզբնավորության հարցում: Նրանք մեր տեսակետը ներկայացրել են այլափոխված ձևով. մեջբերում են արել մեր զրբից, ուր իբր մենք ասած ենք եղել, թե՝ հայերն ընդունելով Դիոկղետիանոսի թվականը՝ 284 թ. օգոստոսի 29-ը, «չորս տարին մեկ օրով առաջ շարժելով... 428—431 թվականներին... հայկական ամանորը հասել էր օգոստոսի 11-ին» (էջ 210): Մենք այդպիսի բան չենք ասել. մեր ասածը այդպես է ստացվել, որովհետև քննադատները մեր երկու տարբեր մտքերը կցել են իրար և երկու տեղ դրած իրենց բաղմակետերով, մեղմ ասած, կերպարանափոխել են այն:

Ի՞նչ էիք ասել մենք. «Անդրեաս Բյուզանդացին իր անշարժ տոմարի համար հիմք է ընդունել հուլյան անշարժ տոմարը՝ դարագլուխ վերցնելով Դիոկղետիանոսի թվականը, որի սկիզբն էր 284 թ. օգոստոսի 29-ը: Հայերը ևս ընդունած են եղել տոմարական այդ համակարգը (այսինքն՝ Անդրեասի—Ա. Ա.) և ամանորը սահմանել օգոստոսի 29-ը, սակայն չորս տարին մեկ օրով առաջ շարժվելով, դուրս են եկել անշարժ տոմարի զուգավորությունից, և 428—431 թվականներին, որ Մաշտոցի դպրոցի ստեղծագործության բեղուն շրջանն էր, հայկական ամանորը հասել էր օգոստոսի 11-ին» (էջ 20): Մեր ասածից հետևում է, որ Անդրեաս Բյուզանդացին իր տոմարական համակարգի համար դադագլուխ է ընտրել Դիոկղետիանոսի դահակալության օրը՝ օգոստոսի 29-ը, իսկ հայերը, ինչպես նաև քրիստոնյա մի շարք այլ ժողովուրդներ, առաջնորդվել են Անդրեասի 352 թ. կազմած տոմարական համակարգով: Մեր այս ասածը շատ հստակ ձևակերպված է գրախոսվող զրբի այլ էջում ևս. «Նիկիայի ժողովից առաջ և հետո,— գրել ենք մենք,— առօրյա գործունեության համար քրիստոնեական տարբեր երկրներում նախ կազմվել էին 19-ամյա, իսկ հետո՝ 95-ամյա տոմարական զտակացանկեր: Այդպես շարունակվեց մինչև 352 թվականը, երբ տոմարագիր Անդրեաս Բյուզանդացին կազմեց երկու հարյուր տարիների զտակացանկ՝ հիմք ընդունելով հուլյան անշարժ կոշվող տոմարը և դարագլուխ վերցնելով Դիոկղետիանոսի դահակալության օրը» (էջ 102): Ըստ որում, պետք է նկատի առնել, որ հայերն ընդունելով Անդրեասի անշարժ տոմարական համակարգը, նրանից բաժան-

վել և առաջնորդվել են շարժական տոմարով ոչ թե 352 թ., այլ նրանից չորս տարի հետո՝ 356 թ.: Ինչ վերաբերում է օգոստոսի 11-ը 428—431 թթ. հետ զուգադիպմանը, ապա այդ հաշվումները կատարված են ոչ միայն մեր. այլև հայ տոմարին քաջածանոթ է. Դյուլորիեի, ինչպես նաև այլ տոմարագետների՝ Հ. Բադալյանի, Բ. Թումանյանի և ուրիշների կողմից ևս:

6. Կրախոսները քննության առնելով դրքի «Թվականները և նրանց վերծանության սկզբունքները» գլուխը, և նշելով, որ այնտեղ «փաստական հարուստ նյութի մեջբերումով վերծանված են զրչագրերում հանդիպող շատ թվականներ», միաժամանակ մատնացույց են արել նրանցից երկու տոմարաթիվ ծածկագրություն, որոնց վերծանության հետ չեն ուղում համաձայնվել:

Տոմարաթիվ այդ ծածկագրերից մեկը հանդիպում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 990 ձեռագրում, որը հրատարակել է պրոֆ. Ն. Ադոնցը «Днищисий Фракийский и армянские толкователи» աշխատության առաջաբանում: Ծածկագրությունը հետևյալն է. «Յամի երեսներորդի երկրորդ երրորդի յոթելյանի միոյ բեսեքիստոնի մին ղիմպիադի թուարերութեան ժամանակի մարդեղութենէ փրկչի. նայ եւ ըստ համարոյ յաբեթադին տոմարի հարիւր քսան եւ ութ (исправлено сверху к ерեսուն և երկու) ինդուսի երկրորդին ամի եղեւ սկիզբն և յաւարտումն զրի... յամսեան Հայոց ահկի, տգոնի միոյ նոնոսի, յերալեցոց յամսին թամուզի, ինդուսի, մեոյ ողոմպեադի հոռմայեցոց յամսեանն յուրին առաջումն աւորու շ[ա]բթի ի ժամն Ի (20)»⁹:

Պետք է ասենք, որ տվյալ ծածկագրության վերծանության ընթացքում մենք հանդիպել էինք որոշ սխալությունների. «բեսեքիստոնը» յոթի թվական արժեքով ընդունելու դեպքում, ինչպես այն զործածվում է հայ ժածկագրության մեջ, հայկական և քրիստոնեական թվականները չէին զուգադրվում: Մնում էր ենթադրել, որ կամ զրչական սխալ է սպրդել հիշատակարանում և պետք է բնագրում ուղղում մտցնել, կամ ընդունել, որ Ն. Ադոնցը «բեսեքիստոնի» թվական արժեքն ընդունած է եղել հինը: Մենք ընտրեցինք երկրորդ հնարավորությունը և ծածկագիրը վերծանեցինք հետևյալ կերպ.

Փրկչական թվականը. 32 հոբելյանը բազմապատկել ենք 50-ով, նրան գումարել մեկ բեսեքիստոն՝ 5, և եկ ոլիմպիադ՝ 4 և ստացել 1609 թ.:

Հայկական մեծ թվականը. 132 իդոսը բազմապատկել ենք 8-ով, նրան գումարել ենք 2 և հայկական թվականի տարբերությունը՝ 551 ու ստացել 1609 թ.:

Հայկական ամսաթիվը. ահկի ամսի մեկ տգոնը՝ 10-ը և մեկ նոնոսը՝ 5-ը գումարել ենք և ստացել ահկի ամսի 15-ը:

Երբայական ամսաթիվը. թամուզ ամսի մեկ իդոսը՝ 8-ը և մեկ ոլիմպիադը՝ 4-ը գումարել ենք և ստացել թամուզ ամսի 12-ը:

Հոռմալիան հուլիս ամսի «առաջնումն» ասելով ծածկագրողը նկատի է ունեցել հուլիսի մեկը:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ ահկի ամսի 15-ը հայկական շարժական տոմարով է և 1609 թ. այն համադրվում է հուլիսի մեկի հետ (ահկի

⁹ Н. Адонц. Днищисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1913, т. XXIV.

15-րդ 255 օր, նրանից հանած հարական՝ 73, մնում է 182, որից հանելով հուլիսի վերջին օրը՝ 181, ունենում ենք հուլիսի մեկը: Ինչ վերաբերում է թամուղ աւմսի 12-ին, ապա այն համապատասխանում է հուլիսի 1-ին¹⁰:

Ճշտված է նաև շաբաթվա օրը, որը եղել է շաբաթ (հուլիսի 1-ին զուգարելով յոթներյակը՝ 7 և կրկնակը՝ 6, ունենում ենք 14, նրանից հանելով մեկ շաբաթվա 7 օրը, մնում է 7, որը և շաբաթ է):

Ինչպե՞ս են առաջարկում վերծանել մեր քննադատները: Նրանք նախ պտնում են, որ «128 իդոսը պետք է ուղղել ոչ թե 132, ինչպես վարվել է ն. Աղոնցը, որին հետևել է մեր հեղինակը (այսինքն՝ մենք — Ա. Ա.)... այլ 133 իդոսի «երկրորդին ամի» (էջ 208):

Նախ՝ պետք է ասենք, որ անարդարություն է բնագրում ուղղում կատարելու մեջ Աղոնցին մեղադրելը, քանի որ Աղոնցը բարեխղճորեն նշել է, որ 128 իդոսի ուղղումը ոչ թե ինքն է կատարում, այլ կատարված է բնագրում՝ «исправлено сверху к еревану и ерևно»: Այսինքն՝ անընդունելի է նրանց առաջարկը՝ 132 իդոսն ուղղելու 133-ի, քանի որ այդ դեպքում կստանանք ոչ թե իրենց ցանկացած 1611 թ., այլ՝ $1617 (133 \times 8) + 2 + 551 = 1617$: Եվ, վերջապես, անարդարացի են մեր քննադատները, երբ հայ մատենագրության մեջ քրիստոնեական թվականը երկու տարի ավելի հաշվելու փաստը հիմնավորելու համար դիմում են XII դարում ապրած Սամուել Անեցուն, քանի որ այդ նույն հարցը հանգամանորեն քննարկված է գրախոսվող գրքի «Քրիստոնեական թվականի վերլուծությունը» ենթագլխում ու գիտականորեն հիմնավորված:

Անարդարացի են նաև մեր ընդդիմախոսները՝ խնդրո առարկա հիշատակարանի հայկական, հոմեական և եբրայական ծածկագիր ամսաթվերի վերծանությունը ներկայացնելու հարցում. դժվար չէ նկատել, որ նրանք ամբողջությամբ վերցրել են մեր վերծանությունը, ուստի գիտական էտիկան պահանջում էր, որ նշեին թե կատարված հաշվումները գրքի հեղինակինն են:

Բայց ուշիմ ընթերցողը, այնուամենայնիվ, կարող է հարցնել, թե ի՞նչ տարբերություններ կան գրքի հեղինակի և ընդդիմախոսների մոտ՝ ծածկագիր թվականի վերծանության վերջնական արդյունքներում: Ըստ մեր վերծանության, ձեռագրի ընդօրինակությունը ավարտված է եղել 1609 թ. հուլիսի 1-ին, շաբաթ օրը (էջ 133): Մեր ընդդիմախոսները գտնում են, որ «ձեռագրի ընդօրինակության թվականը պետք է ընդունել 1609 և ոչ թե 1611», իսկ ամսաթիվը՝ «հուլիսի 1-ին, որն իսկապես շաբաթ է» (էջ 208): Կա՞ արդյոք դրանց մեջ տարբերություն:

Երկրմաստ է քննադատներիս վերոբերյալ նախադասության մեջ «պետք է ընդունել 1609 և ոչ թե 1611» արտահայտությունը. մեր վերծանությանը անծանոթ մեկը կարող է կարծել, թե մենք ենք երեկ 1611 թ. հաշվում կատարողը, որի հետ համաձայն չեն քննադատները: Իրականում, 1611 թ. վարկածը ճիշտ կամ սխալ առաջ քաշողները եղել են իրենք, ուստի պետք չէր երկրմաստ նման ձևակերպումով սխալ տպավորություն ստեղծել:

Ավելորդ ենք համարում քննության առնել տեմարաթիվ ծածկագրության երկրորդ օրինակը, որովհետև տարակարծությունը դարձյալ «բեկեթի»

¹⁰ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 172:

տոն» բառի հաշվի շուրջն է. մենք հայկական և փրկչական թվականները գույզադրելու համար «Բեսեքիստոնը» ընդունել ենք 5 և հաշվել երկու բեսեքիստոն, իսկ ընդդիմախոսներս առաջարկել են բնագրի «ութերորդ նոնոսը» ուղղել «եօթերորդ նոնոսի»:

7. Քննադատներին մատնացույց արած տոմարաթիվ ծածկագրության մյուս երկու օրինակները ոչ մի կապ չունեն գրախոսվող գրքի հետ. դրանք վերցված են «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականի 1973 թ. № 1-ում տպագրված մեր հոդվածից, ուր մենք հրատարակել ենք ոչ թե երկու, այլ 19 տոմարաթիվ ծածկագրեր և վերծանել: Եվ ահա նրանց մեջ մեր ընդդիմախոսները գտել են երկուսը, որոնք, իրենց կարծիքով, սխալ են վերծանված և կարելի է քննադատել:

Հարկ ենք համարում ասել, որ ոչ միայն «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականում, այլև մեր գրքերում, «Պատմա-բանասիրական հանդեսում» և այլ պարբերականներում հրատարակել ենք հարյուրից ավելի ծածկագրերի վերծանություններ և այժմ հավակնություն չունենք ասելու, որ նրանց մեջ չկան վրիպումներ: Սակայն մեզ վշտացնում է մեր ընդդիմախոսների ոչ բարի միտումը. օգտագործել դրախոսելու առիթը, որոնումներ կատարել Արրահամյանի աշխատությունների մեջ՝ անպայման սխալներ գրտնելու և քննադատելու համար:

Բայց քննության առնենք «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականի մեր հոդվածներում «հայտնաբերած» սխալները: Ընդդիմախոսներիս քննության առած տոմարաթիվ ծածկագրերից մեկը վերցված է Զմամուի մատենադարանի № 594 ձեռագրից, ուր ասված է հետևյալը.

«Զի էր քիւ Հայկա մեծիւն¹¹
Ըսկիգրեք քուոյ միւնչև վերջիւ,
Դու կրկնես քեզ խէ տաղիւ.
Իննեակ քուով վերայ բարդիւ»¹²:

Եթե դումարագիր թվական ենք համարել «Հայկա մեծիւն» բառերը և տառանիշների թվական արժեքը գումարելով՝ ստացել ենք 1107: Ստացած գումարի վրա ավելացրել ենք «և» տառի կրկնակը՝ 80-ը, ինը («Իննեակ թուով վերայ բարդիւ»), հայկական թվականի տարբերությունը՝ 551-ը և ստացել 1747: Այդ էլ համարել ենք ձեռագրի գրչության թվականը:

Սեր քննադատները ևս ծածկագիր են համարել «Հայկա մեծիւն» և գումարելով տառանիշների թվական արժեքը՝ ստացել 1107: «Խէ» տառը թողել են իր իսկ ունեցած քառասունյեթ թվական արժեքով, կրկնապատկել են և ստացել 94, որը, իննի և 551-ի հետ միասին, գումարելով 1107-ին, ստացել են 1761: Տեսնելով, սակայն, որ այդ թվականը շատ է հեռանում ձեռագրի հիշատակարանում մի քանի անգամ նշված 1747/1748 թվականից, հանգել են հետևյալ եզրակացության. «Հետևապես այս թվականը ձեռագրի ընդօրինակման թիվը չէ, ինչպես փորձում է հավաստել Ա. Արրահամյանը: Այդ քառյակը ծածկագիր խնդիր է կամ հանելուկ, ինչպես երբեմն հանդիպում ենք ձեռագրերում» (էջ 212):

Քննադատներս, ինչպես երևում է, չեն հասկացել «Դու կրկնես ընդ խէ

¹¹ Մեր հրատարակած բնագրում «մեծիւն» բառի վերջին «ն»-ն դուրս է ընկել, սակայն վերծանության ընթացքում նրա թվական արժեքը հաշվի է առնված:

¹² Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմամուի վանքի մատենադարանի, Բ, Վիեննա, 1971, էջ 204:

տառին» տողի իմաստը և թյուրիմացության մեջ են ընկել: Այստեղ «խէ»-ն ոչ թե թվանշան է, այլ տառի անունը՝ «լյուն», «խե», «ծա», «կեն», «հո» և այլն: «ն» տառն ունի 40-ի թվական արժեք, որի կրկնակը կլինի 80, և որը ճիշտ հաշվելու դեպքում հիշատակարանը հանելուկի չի վերածվի, այլ ճիշտ ու ճիշտ կհամապատասխանի նույն ձեռագրի գրչության մասին եղած մյուս հիշատակարաններում մատնացույց արված 1747/1748 թթ., ինչպես մենք հաշվել ենք:

«Բանբեր Երևանի համալսարանի» հոգվածից վերցված և ընդգիմահոսների կողմից քննադատված մյուս ծածկագրությունը պարունակում է Զմմառի մատենադարանի № 485 ձեռագիրը: Ծածկագրությունը վերծանելու փորձ էին արել Զմմառի ձեռագրի ցուցակի հրատարակիչները և ձեռագիրը գրված համարել 1628 թ.: Մենք առարկել ենք այդ վերծանությունը այն պատճառաբանությամբ, որ հիշատակարանում նշվում է, որ գրչության սվարտը եղել է «ի մուտ ամսին ապրիլի, որ Ղազարու շաբաթ կոչի», այսինքն՝ ապրիլի 1-ին՝ Ղազարի տոնին: Ղազարի տոնը լինում է ծաղկազարդի կիրակիից մի օր առաջ՝ շաբաթ օրը, իսկ 1628 թ. զատիկը եղել է ապրիլի 13-ին և չի համադրվում ապրիլի 1-ի հետ: Մենք փորձել էինք գտնել վերծանության մի այլ ուղի՝ ձեռագիրը գրված համարելով 1610 թ.: Մեր այս վերծանության մեջ առկա է մեկ օրվա անհամապատասխանություն: Մեր քննադատների խոսքից պարզվում է, որ նրանց հայտնի է եղել նույն ծածկագրի շաղավաղված մի բնագիր՝ հրատարակված «Սիոն» և «Հանդես ամսօրյա» պարբերականներում, որը վրիպել է մեր ուշադրությունից: Այդ բնագիրն, իրոք, ուշագրավ է և մեզ հնարավորություն է տալիս վերանայելու մեր նախորդ վերծանությունը:

О НЕКОТОРЫХ СПОРНЫХ ВОПРОСАХ ИСТОЧНИКОВЕДЕНИЯ

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

В четвертом номере «Историко-филологического журнала» за 1975 год была опубликована рецензия В. Акопяна и Э. Пивазяна на нашу книгу «Армянское письмо и письменность». Авторы рецензии, оценивая нашу работу в области армянской палеографии, выдвинули ряд спорных источниковедческих вопросов, с которыми нам трудно согласиться.

Одним из таких спорных вопросов является проблема армянской языческой письменности. Мы не разделяем мнения наших рецензентов, что в древней Армении не существовало своего письма. В статье приведен ряд конкретных фактов в пользу существования языческой храмовой письменности. Второй вопрос связан с армянской литературой IV в. В. Акопян и Э. Пивазян пытаются отрицать возможность существования армянской письменности домаштоцевского периода. Мы не согласны с ними.